

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԲՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԲՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 2001 թվականի մայիսի 2-ի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 63-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) աճուրդով (սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում նաև՝  
Էլեկտրոնային աճուրդով).»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր  
խմբագրությամբ.

«1. Պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի  
վաճառքը, բացառությամբ սույն օրենսգրքի 65-րդ և 66-րդ հոդվածներով  
նախատեսված դեպքերի, կատարվում է աճուրդով (սույն օրենսգրքով  
նախատեսված դեպքերում նաև՝ Էլեկտրոնային աճուրդով).»:

**Հոդված 3.** Օրենսգրքը լրացնել նոր 70.1-ին հոդվածով.

#### «Հոդված 70.1. Երևան համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի վաճառքն Էլեկտրոնային աճուրդով

1. Երևան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային  
սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքը, բացառությամբ  
սույն օրենսգրքի 65-րդ և 66-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի,  
կատարվում է Էլեկտրոնային աճուրդով:
2. Էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և իրականացման կարգը  
սահմանվում է սույն հոդվածով և «Հրապարակային  
սակարկությունների մասին» օրենքով՝ Էլեկտրոնային համակարգերի  
միջոցով կազմակերպվող աճուրդներին վերաբերվող  
կարգավորումներով: Երևան համայնքի վարչական սահմաններում  
գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի  
Էլեկտրոնային աճուրդով վաճառքի նկատմամբ չեն կիրառվում  
«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի  
2-րդ մասի դրույթները:
3. Էլեկտրոնային աճուրդն իրականացվում է Երևանի  
քաղաքապետարանի ([www.yerevan.am](http://www.yerevan.am)) պաշտոնական Էլեկտրոնային  
կայքի միջոցով:
4. Էլեկտրոնային աճուրդի լուտ կարող է լինել Երևան համայնքի

սեփականությունը հանդիսացող հողամասը կամ դրա առանձին հատվածը:

5. Էլեկտրոնային աճուրդի կազմակերպիչը Երևանի քաղաքապետն է:

6. Էլեկտրոնային աճուրդով իրացվող լոտի մեկնարկային գինը հաշվարկվում է սույն օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով, իսկ նախավճարի չափը և աճուրդի դրված հողամասի քայլի չափը՝ սույն օրենսգրքի 68-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով:»:

**Հոդված 4.** Երևանի քաղաքապետարանի ([www.yerevan.am](http://www.yerevan.am)) պաշտոնական էլեկտրոնային կայքի համապատասխանեցումը «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 35.6-րդ հոդվածում նշված պահանջներին կատարվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո վեց ամսվա ընթացքում:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի ([www.yerevan.am](http://www.yerevan.am)) պաշտոնական էլեկտրոնային կայքի՝ «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 35.6-րդ հոդվածում նշված պահանջներին համապատասխան գործարկման օրվանից: